# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

## ԼԵՌՆՆՑԻ

Ծիծաղեցէք, իմ ընկերներ, վշտիս վրայ,
Տարօրինակ անգամ թող նա ձեզ թըւայ,
Համարեցէք նրան հիւանդի զառանցանք—
Ինձ չեն խայթում ձեր ծիծաղն ու կըշտամբանք։

Ծիծաղեցէք, եթէ նրա մէջ չէք տեսնում
Մի երկայն շարք մտածումների, սև, տրտում
Մտածումների, որ չեն գտնում պատասխան,
Որ օժիտ է ինձ մեր կեանքից չուառական։

Ծիծաղեցէք. բայց գիտցէք, որ իմ վիշտը
Չէ ինձ յատուկ. նրան զգացել է ձեր սիրտը,
Նա թագնուած է ձեր ծիծաղի տակ անձայն։
Երանի՜ նրան երբէք չը զգաք ինձ նման։

Թանձրը մշուշի պէս շուրջ խաւարն է տիրում,
Լոկ խորերում, ինչպէս արևն ամպերում,
Մի պայծառ լոյս ճգնում է նրան պատառել,
Ցայտնուել, փայլել, չորս կողմ մըշուշը ցրուել։

Բայց սոսկում ենք մենք այդ լոյսից բաղդաբեր՝
Նզովուած կեանքի դարձած տըգեղ ըստրուկներ,

Մինչ մեր ետև թաղուած վիհի խաւարում՝
Ընդհանրութիւնն խոր տնքում է, մահանում...

Ծիծաղեցէք, իմ ընկերներ, վշտիս վրայ,
Թէ նրա գաղտնի միտքըն անյայտ ձեզ մընայ։
Երանի՜ ձեր ծիծաղից յետ բնաւ այնպէս
Դուք չը թափէք արտասուքներ, որպէս ես։

9 յուլիսի, 1890 թ.

---

* * *

Մի՛ ջանար դընել սպեղանի վերքիս.
Թող հոսէ արիւնս. դուրը տանջանքիս
Նա կը տայ աւարտ—հանդիստ ցանկալի.
Որպէն էլ բաւ է, որ մարդը մեռնի։

Մի՛ ջանար վերքիս սպեղանի դընել
Եւ դադարի՛ր զուր արտասուք թափել.
Դու գիտես, որ լոկ արիւնն կը լինի
Մարդկութեան ցաւի միակ սպեղանի։

3 մայիսի, 1891 թ.

---

***

Այս փտող աշխարհի արգանդից վիժած՝
Որդները քաղցի ու թշուառութեան,
Որդները կեանքի անարդարութեան
Նոյն իրանց մօրը մարմնում ցամաքած
ՙրրել են իրանց ախտաւոր բոյնը,
Տարածել նրա մէջ մահաբեր թոյնը։

Եւ հազարաւոր կողմերից ճաքած,
Որպէս տիրողի հնացած ապարան,
Այդ հին աշխարհը որոտանքման
Կը կործանուէ՝ հիմքն արմատից փրլած,
Արեան անձրևով ողջ շաղախուելով,
Դիերի լեռներ չորս կողմ կանգնելով։

Բայց լըղի է այդ աշխարհը հնացած.
Արնալի ժամին ծննդաբերութեան
Պիտ ծագեն օրերն սուրբ արդարութեան...
Փրլիր, կործանուիր, աշխարհ զառամած.
Թող տանջուած մօրը ցաւից դժոխային
Ծագէ զաւակին մի կեանք դրախտային...

3 ապրիլ, 1891 թ.